ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆԵ,

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 12-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 24.1-րդ կետ.

«24.1) սահմանում է Երևանում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում ըստ դրանց գտնվելու վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրը ապահովելու ժամերը (22.00-ից մինչև 7.00-ն, 23.00-ից մինչև 7.00-ն և 24.00-ից մինչև 7.00-ն):»:

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«28) որոշում է ընդունում Երևանում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների ~~(կարաոկեն, դիսկոտեկը, հեստապարային ակումբը, սաունան, բաղնիքը և շոգեբաղնիքը)~~ տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջների վերաբերյալ:»:

Հոդված 3. Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «և կենցաղային» բառերը փոխարինել «, կենցաղային և սահմանափակման ենթակա» բառերով:

Հոդված 4. Օրենքի 60-րդ հոդվածի 1-ի մասում լրացնելնոր 3-րդ կետ.

«3) Երևան քաղաքի տարածքում տալիս է սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների (կարաոկե, դիսկոտեկ, հեստապարային ակումբ, սաունա, բաղնիք և շոգեբաղնիք) գործունեության թույլտվություն:»:

Հոդված 5. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ տարի հետո:
2. Սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով լրացվող 12-րդ հոդվածի 1-ին մասի 24.1-րդ և 28-րդ կետերը ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: